տան պատն վերացուցեալ մեծացուցաք, զի անդ կանգնեալ ժողովուրդն պահին ի ցրտոյն։

Սուրբ Սարգիս Շաբաթ օրս (24 Յունուար) ձիւն էր գալիս. և գնացին Հայք և Հոռոմք ի տիւանն, և յետ ժամուն և ես անդ գնացի՝ մինչև ելին ի տիւանէն, և իմացեալ մեր՝ թէ Հոռոմք բազում թղթերս հանեալ ցոյց են տվեալ և մերայնոցս ոչ գոյր ասա բայց մի և Բ. և գնոսա տան ցոյց, ոչ ընդունի վէզիրն՝ թէ զսոցա մայրն պիտի. և նոքա ևս մի թուղթ այլ հանեալ՝ թէ յՕմարէն առեալ եմք, և վէզիրն ասացեալ թէ Ահա՛ այսպիսի թուղթ կ'ուզեմ. այլ արհամարհեալ զՀայք, չոգան ի դուրս։ Զայս արար վէզիրն և Անատոլի զազիէսքէրին որ Պոլուլու ասի, քանզի մեք զվէզիրն ի մեր կոյս գիտացեալ անհոգացաք, այլ նոքա յառաջագոյն հրապուրեալ էին զՊոլուլուն ի գործս յայս և զվէզիրն ևս բազում դրամով։ Եւ մերայինքս գնացեալ ընդ մուֆտին և նա յօժարեալ զի տեսանիցէ, և առաքեալ թուղթ առ վէզիրն թէ Տեսցես և խաղաղացուսցես զերկոսեանն. և Պոլուլուն առ մուֆտին գնացեալ և անդ ասացեալ բան ինչ թէ Հոռոմք ի ձեռս իւրեանց զայս ունին և նոցա է, և այլ ինչ. և մուֆտին յամենայն խօսիցն և բանին զպատասխանին տվեալ, ապա մնայ։ Եւ Հոռոմքն տեսեալ զդրունս մեծամեծացն պարգևօք բազմօք զի լիցին ի կողմս իւրեանց, և գնացեալ առ մուֆտին, նա ոչ տվեալ նոցա մի խօսս, այլ արհամարհանօք ի բաց վարէ։ Եւ ըռէյիզն, որ Շամիզատէ ասի, ի մեր կողմս էր, և նա ևս ոչ առեալ զընծայս նոցա։

Եւ Գշի օրս (27 Յունուար) կրկին գնան Հոռոմք առ վէզիրն՝ թէ տացեն էմր վասն բանին. վէզիրն զնոսա ի բաց վարէ, և զայս տեսեալ նոցա՝ երկուցեալ գուցէ աւերի բանն։

Դշի (28 Յունուար). մարդ ուղարկեալ մերայնոցս